

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԼԵՎՈՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Ժ.01.06 – «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-Ռուսական (Սլավոնական)
համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ՀՌԿՍԵԹՅԱՆ ՄՈՒԵԵՂ ՄԱՅԻՍԻ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ԱԼՈՅԱՆ ԼԵՆԴՐՈՒԷ ԱՐԱՄԻ

բանասիրական գիտությունների
թեկնածու

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՍՏՂԻԿ ԱՇՈՏԻ

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան
հայկական պետական
մանկավարժական
համալսարան:

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. ապրիլի 17-ին՝ ժամը 14³⁰-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՀ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ ք. Երևան 25, Աբովյան 52ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության
ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. մարտի 13-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր



Ա. Ա. ՄԱԿՐԱՅԱՆ

ԱՆՆԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Սույն ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետության տնտեսական լրագրության կայացման, զարգացման և ներկայիս իրավիճակի հետազոտությանը, որն ընդգրկում է 1991-2012թթ. ժամանակահատվածը: Աշխատության մեջ փորձ է արվել ուսումնասիրել ՀՀ տնտեսական ուղղվածությամբ լրատվամիջոցների՝ որպես շուկայական ենթակառուցվածքի կայացման և զարգացման շրջափուլերը, և գնահատել դրանց դերը երկրի սոցիալ-տնտեսական կյանքում:

Տնտեսական ՁԼՄ-ները շուկայական համակարգի կարևոր բաղադրիչներից են, քանի որ նրանք կոչված են բավարարելու գործարար հանրության տեղեկատվական պահանջարկը՝ ստեղծելով տնտեսական զարգացմանը նպաստող տեղեկատվական դաշտ: Տնտեսական ՁԼՄ-ները կարևոր դեր ունեն նաև հասարակության կյանքում՝ բարձրացնելով ու ուսումնասիրելով սոցիալ-տնտեսական բնույթի հարցեր: Ջարգացած երկրներում, որտեղ կայացել է ֆոնդային շուկաներում ներդրումներ իրականացնող միջին դասը, տնտեսական լրատվամիջոցները հասարակության լայն շերտերի համար հանդիսանում են տեղեկատվության հիմնական աղբյուր, քանի որ հենց լրատվամիջոցներից է հասարակությունը տեղեկանում բորսաներում զարգացումների մասին:

Իր կայացման հարյուրամյակների ընթացքում տնտեսական լրագրությունը վերաճել է տնտեսությունը սպասարկող գործիքից տնտեսության վերահսկման և մասամբ կարգավորման ենթակառուցվածքի: Վերջին տասնամյակներում՝ ժամանակակից գլոբալացված տնտեսության և ֆոնդային շուկաների պայմաններում, տնտեսական լրագրության ազդեցությունը զգալիորեն աճել է և անցել է ազգային սահմանները:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆԵԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Եթե ներկայումս, Հայաստանում զարգացած կապիտալի շուկայի բացակայության պայմաններում, տեղական տնտեսական լրատվամիջոցները առավելապես սպասարկում են գործարարության համեմատաբար նեղ շերտ, ապա 2014թ. կենսաթոշակային բարեփոխումների արդյունքում նրանց լսարանն էապես կաճի՝ հաշվի առնելով հասարակության լայն շերտերի մոտ անհատական կենսաթոշակային հաշիվների գոյացումը և, որպես դրա հետևանք, Հայաստանի կապիտալի շուկայի զարգացումը:

Ֆինանսական շուկաները ՁԼՄ-ների կողմից առավել լուսաբանվող ոլորտներից են, ինչպես նաև հանդիսանում են թերթերի և լրատվական գործակալությունների համար եկամտի խոշորագույն աղբյուր: Արդյունքում ֆինանսական և բիզնես տեղեկատվությունն այսօր կազմում է համաշխարհային լրագրողական արտադրանքի մեկ երրորդը, և մրցակցությունը մեղիաշուկայում տնտեսական ՁԼՄ-ների միջև ուժեղագույններից է:

Տնտեսական լրագրությունն իր պատմության ընթացքում էապես նպաստել է բազմաթիվ գաղափարների առաջնդմանը: Տնտեսական լրագրությունը, իրազեկելով և առաջադեմ մտածելակերպ խթանելով, ունակ է արագացնել Հայաստանի ժողովրդավարացումը և տնտեսության արդիականացումը:

Սինչ օրս միջազգային ասպարեզում ևս քիչ ուշադրություն է դարձվել տնտեսական լրագրության և նրա տեսակների ուսումնասիրմանը: Հայաստանում այս ոլորտը հետազոտության է ենթարկվում առաջին անգամ սույն ատենախոսության մեջ:

Ելնելով վերը շարադրվածից, Հայաստանի տնտեսական լրագրության, իր կայացման և ներկա վիճակի հետազոտությունը խիստ արդիական է: Սույն ատենախոսությունը թույլ է տալիս մանրամասն և համալիր կերպով հասկանալ խնդիրներն ու մարտահրավերները, որոնց բախվում են ՀՀ տնտեսական լրատվամիջոցները, ինչպես նաև ծանոթանալ ՀՀ տնտեսական ԶԼՄ-ների կայացմանը և բիզնես-մեդիաների շուկայի ներկայիս իրավիճակին:

Հետազոտության նյութերը կարող են օգտակար լինել Հայաստանի տնտեսական մեդիաների շուկայում ընթացող գործընթացների լուսաբանման տեսանկյունից, աշխատությունը կարող է օգտագործվել ակադեմիական և հետազոտական աշխատանքներում՝ ներկայացնելու ՀՀ տնտեսական մեդիաների դերը, որպես կառավարության և բիզնեսի նկատմամբ հասարակական վերահսկողություն իրականացնող մարմին, ինչպես նաև երկրի տնտեսական զարգացմանը նպաստող շուկայական ենթակառուցվածք: Հետազոտության նյութերը կարող են օգտակար լինել կրթական գործընթացներում՝ տնտեսական լրագրության ոլորտում մասնագետներ պատրաստելիս, ինչպես նաև հատուկ դասընթացներ մշակելիս:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն հետազոտության նպատակն է ՀՀ տնտեսական լրագրության կառուցվածքային վերլուծությունը և ընդհանրացումը՝ Հայաստանի սոցիալ-տնտեսական իրողությունների և տնտեսական գլոբալացման համատեքստում: Ելնելով դրված նպատակից, աշխատության մեջ ներկայացված են հետևյալ հիմնական խնդիրները.

- Հայաստանի տնտեսական մեդիաների շուկայի կայացման և ներկայիս կառուցվածքի նկարագրությունը և վերլուծությունը;
- Հայկական տնտեսական լրատվամիջոցների և տնտեսական կյանքը լուսաբանող լրագրողների առջև ծառայած խնդիրների և մարտահրավերների վերլուծությունը;
- Հայաստանի տնտեսական մեդիաների գործունեության հիմնական ուղղությունների վերլուծություն, ՀՀ տնտեսական լրագրության՝ որպես շուկայական ենթակառուցվածքի դիտարկման փորձ և միջազգային պրակտիկայի հետ զուգահեռների անցկացում;
- Հայաստանի տնտեսական լրագրության միջնաժամկետ զարգացման ուղղությունների սահմանման փորձը՝ լրագրողներին և լրատվամիջոցներին սպասող մարտահրավերները կանխորոշելու համար:

Հետազոտության օբյեկտը Հայաստանի տնտեսական լրագրությունն է:

Հետազոտության առարկան տնտեսական լրագրության դերն է ՀՀ սոցիալ-տնտեսական կյանքում, իշխանությունների, բիզնեսի և տնային տնտեսությունների կողմից որոշումների կայացման վրա ազդելու իր կարողությունը, ինչպես նաև իր զարգացման ուղու վրա առկա խնդիրներն ու խոչընդոտները:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը գրեթե զրոյական է և սույն ատենախոսությունը հանդիսանում է Հայաստանի տնտեսական լրագրության առաջին հետազոտությունը:

Ատենախոսության թեմայի ուսումնասիրման համար կարևոր նշանակություն է ունեցել տնտեսական լրագրության գիտական մշակվածության ամերիկյան և արևմտաեվրոպական փորձը (Յի Ջին, Անթի Այնսոն, Ջանե Թիեմարի և Էրո Կաարա, Կատյա Կոյկալայեն, Ուիլյամ Քիզան, Սյուզան Ֆենզլեր, Ստեֆան Ռուբ-Մոու, Ջեֆրի Մադրիք, Գրիլան Դոյլ, Բրյուս Փեյջ, Աարոն Դևիս, Մ. Գրաֆտերեմ, Ռ. Հեյվուդ, Պոլ Քապրիոտի, Դևիդ Ջ. Փարք, Լարի Մ. Ռայթ, Դամիան Թամբինի, Գ. Թամբլեր, Ջ. Թանսթրալ, Քրիս Ռաշ և այլք)¹, որն օգնել է մեթոդաբանության և հետազոտության ուղղվածության որոշման, հայաստանյան և արևմտյան տնտեսական լրագրության հիմնական ընդհանրությունների և տարբերությունների, ինչպես նաև ՀՀ բնակչության կենսամակարդակի աճին զուգընթաց հայկական տնտեսական լրատվամիջոցներում սպասվող զարգացումների բացահայտման հարցերում:

Ատենախոսությունում օգտագործվել են նաև նյութեր և տվյալներ մամուլից և ինտերնետ-աղբյուրներից, ինչպիսիք են. «Կապիտալ», «Օրակարգ», «Առավոտ», «Դելովյ Էքսպրես», «168 ժամ», «Հայոց աշխարհ», «РБК Daily», «Ведомости», «Коммерсантъ», «The Independent» թերթերը, «Մեդիամաքս», «Արմինֆո», «ԱՌԿԱ», լրատվական գործակալությունները, Panarmenian.net, News.am, B24.am, Banks.am, Finport.am, «РБК», Hetq.am, Russia-today.ru, Banker.am, A1Plus.am, Scientific.ru լրատվական կայքերը, «Երևան Փրոդաքշնգ», «BBC», Sanomawsoy.fi մեդիաընկերությունների վեբկայքերը, Mintv.ru, Circle.am, Tns-global.ru, Armeconomedia.com, Sabew.org, Businessjournalism.org, Journalism.narod.ru, Pcc.org.uk վեբկայքերը և այլն:

Ատենախոսությունում օգտագործվել են նաև ՀՀ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության և ԵՄ պաշտոնական փաստաթղթերի, օրենսդրական ակտերի, պաշտոնական ելույթների էլեկտրոնային տարբերակները²:

¹ Jin Y., AGENDA-SETTING EFFECTS OF TELEVISION NEWS COVERAGE ON PERCEPTIONS OF CORPORATE REPUTATION, University of Missouri-Columbia, May 2008.72 pp.; Shiller, R. (2001) Irrational Exuberance. Princeton, NJ: Princeton University Press, 312 pp.; Ainamo A., Tienari J., Vaara E., *Between West and East: A social history of business journalism in Cold War Finland*, Human Relations, 2006; 59: 611-640; Koikkalainen K. (2007) The local and the International in Russian business journalism: Structures and practices, *Europe-Asia Studies*, 59:8, 1315 — 1329; Keegan W., The birth of greed, *British Journalism Review*, 2001 12:45, pp45-50; Fengler S., Rub-Mohl S., *Journalists and the information-attention markets : Towards an economic theory of journalism*, Journalism, TU Dortmund University, Germany, Università della Svizzera italiana, Switzerland, 2008 9: 667-690; Madrick J., *Financial Reporting : Lessons of the Enron Collapse*, The International Journal of Press/Politics, Harvard College, USA, 2003, 8: pp3-7; Doyle G., *Financial news journalism : A post-Enron analysis of approaches towards economic and financial news production in the UK*, Journalism, University of Stirling, UK, 2006 7: 433, pp 433-452; Page B., *Pricking the bubble: financial scandal and the media*, 2002 13:49 *British Journalism Review*, London, pp 49-57; Davis A., *Media Effects and the Active Elite Audience : A Study of Communications in the London Stock Exchange*, *European Journal of Communication*, London, 2005 20: 303, pp 303-326; Davis A., *The economic inefficiencies of market liberalization, The case of financial information in the London Stock Exchange*, Goldsmiths College, University of London, *Global Media and Communication*, 2007 3: 157,pp 157-178; Tungate M., *Media Monoliths: How great media brands thrive and survive*, London, 2004, 261; Grafström, M., 2006, *The Development of Swedish Business Journalism: Historical Roots of an Organisational Field*. 209 pp. Distributor: Uppsala University, Department of Business Studies, Box 513, SE-751 20 Uppsala, Sweden etc.

² ՀՀ Քաղաքացիական օրենսգրքը, Հոդված 1087.1. Պատվին, արժանապատվությանը կան գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները` Հայաստանի

Հաշվի առնելով Հայաստանի տնտեսական լրագրության վերաբերյալ գիտական հրապարակումների փաստացի բացակայությունը, հեղինակի կողմից անցկացվել է ավելի քան 40 հարցազրույց սոցիալ-տնտեսական թեմատիկան լուսաբանող լրագրողների, Հայաստանի տնտեսական լրատվամիջոցների ղեկավարների և խմբագիրների, ինչպես նաև ՀՀ-ում տնտեսական բնույթի տեղեկատվության հիմնական սպառող գործարար և գիտական հանրության ներկայացուցիչների և պետական մի շարք հաստատությունների ղեկավարների հետ, որոնք կարևոր օղակ են հանդիսանում տնտեսական լրագրության «արտադրություն – սպառում» շղթայում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության թեմայի արժարժման համար կիրառվել են պատմական և տեղեկատվա-վիճակագրական համալիր մոտեցման սկզբունքներ և մեթոդներ: Մասնավորապես, հետազոտության հիմնական սկզբունքներն են պատմականությունը, օբյեկտիվությունը, հետազոտվող փաստերի, գործընթացների և երևույթների քննադատական մեկնաբանությունը: Նշված ընդհանուր մեթոդաբանական սկզբունքերը պայմանավորել են հետազոտության հետևյալ մեթոդները. ժամանակագրական, պատմահամեմատական, բովանդակության վերլուծություն (content analysis), հարցազրույց:

Ատենախոսության գիտական նորույթը նախանշվում է հետևյալ դրույթներում.

- Ատենախոսությունում առաջին անգամ փորձ է արվել ամբողջական, համալիր և կառուցվածքային հետազոտության ենթարկել ՀՀ տնտեսական լրագրության կայացման և զարգացման ուղին 1991-2012թթ. ժամանակահատվածում;
- Առաջին անգամ վերլուծության են ենթարկվել ՀՀ տնտեսական ՉԼԱ-ների գործունեության հիմնական ուղղությունները, Հայաստանի տնտեսական կոնյունկտուրայի արտացոլումը տնտեսական լրատվամիջոցների գործունեության վրա, լրագրողների մասնագիտական մակարդակը և տնտեսական մեդիաների շուկայի իրավիճակը և միտումները;

Հանրապետության օրենքը «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 15.06.2010 <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=3849&lang=arm;> ՀՀ օրենքը կուտակային կենսաթոշակների մասին, <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=4055&lang=arm;> United Kingdom Government Her Majesty's Treasury (HM Treasury) Transposition Note for Directive 2003/6/EC – The Market Abuse Directive (MAD), http://www.hm-treasury.gov.uk/d/MAD_tn240205.pdf; DIRECTIVE 2003/6/EC OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL of 28 January 2003 on insider dealing and market manipulation (market abuse), <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2003:096:0016:0016:0016:en:PDF>; Национальная статистическая служба Армении, «Социально-экономическое положение Армении в январе-ноябре 2008г.» 2008г., http://www.armstat.am/file/article/sv_11_08r_0.pdf; ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության «Պարենային ապահովությունը և աղքատությունը Հայաստանում 2010» պարբերական հրապարակումը, 2011, http://armstat.am/file/article/f_sec_3_11_8.1-8.2.doc.pdf; ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի ելույթը Ազգային ժողովում 2009թ. պետական բյուջեի նախագծի ներկայացման կապակցությամբ, <http://www.gov.am/files/docs/301.pdf>; ՀՀ Կառավարության 611 – Ն որոշումը «Բրենդիի համար առանձին ապրանքային անվանում սահմանելու մասին», <https://www.e-gov.am/gov-decrees/item/17909/>; City Slickers ruling, UK Press Complaints Commission, <http://www.pcc.org.uk/news/index.html?article=MTc4NQ>

- Առաջին անգամ փորձ է արվել որոշել ՀՀ տնտեսական լրագրության դերը, որպես շուկայական ենթակառուցվածք, և տնտեսական իշխանությունների և բիզնեսի գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողություն իրականացնող մարմին;
- Առաջին անգամ փորձ է արվել կանխորոշել և վերլուծության ենթարկել ՀՀ տնտեսական լրագրության զարգացման միջնաժամկետ հեռանկարները՝ այն ասպեկտների հայտնաբերմամբ, որոնք պետք է հաշվի առնվեն տնտեսական մեդիաների ղեկավարները և աշխատակիցները, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ լրագրության ֆակուլտետների համար համալսարանական ծրագրեր կազմելիս:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի ժուռնալիստիկայի ամբիոնում: Ատենախոսության հիմնական արդյունքները գեկուցվել են Հայ-ռուսական համալսարանի ուսանողների, ասպիրանտների և դասախոսների տարեկան գիտական համաժողովներին: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են տվյալ հետազոտության թեմայով հրապարակված 4 գիտական հոդվածներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսության կառուցվածքը համապատասխանում է հետազոտության հիմնական նպատակին և առարկային: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, քսանմեկ ենթագլուխ պարունակող երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ համառոտ ներկայացված են հարցի պատմությունը, ատենախոսության նպատակներն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական հիմքը, հիմնավորված են թեմայի արդիականությունն ու գիտական նորությունը:

ԳԼՈՒՆ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԼՄ-ՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ-ՄԵԴԻԱՆԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Կեց ենթագլխից բաղկացած ատենախոսության առաջին գլխում ներկայացված են տնտեսական լրագրության դերը հասարակության սոցիալ-տնտեսական կյանքում, Հայաստանի տնտեսական ԶԼՄ-ները, բիզնես-մեդիաների տեղական շուկայի կառուցվածքը և գործունեության պայմանները: Ներկայացվում և վեր են լուծվում Հայաստանի տնտեսական լրագրության կայացման և զարգացման շրջափուլերը, Հայաստանի տնտեսական լրատվամիջոցների նպատակային լսարանը, տնտեսական կոնյունկտուրայի արտացոլումը ՀՀ տնտեսական մեդիաների վրա և տնտեսական լրագրողների մասնագիտական աճի ու սոցիալական պաշտպանվածության հիմնահարցերը:

1.1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Առաջին ենթազվխում ներկայացվում է տնտեսական լրագրության դերը հասարակության սոցիալ-տնտեսական կյանքում: Գործարարության տեղեկատվական պահանջներն այսօր բավարարում են տնտեսական լրագրողները, որոնք պատրաստում են նյութեր, այդ թվում վիճակագրական, գովազդատեղեկատվական, վերլուծական և այլն՝ նպատակ ունենալով ձևավորել բիզնեսի զարգացմանը նպաստող տեղեկատվական դաշտ³: Իր կայացման ընթացքում տնտեսական լրագրությունը տնտեսության սպասարկման գործիքից վերածել է իր վերահսկողության միջոցի: ՉԼՄ-ները բիզնեսի և իշխանությունների կողմից կառավարչական և այլ որոշումների կայացման վրա ազդող կարևոր գործոններից են:

Ֆինանսական շուկան ՉԼՄ-ների կողմից առավել շատ լուսաբանվող ոլորտն է, ինչպես նաև թերթերի և լրատվական գործակալությունների՝ տեղեկատվությունից ստացված եկամտի ամենամեծ աղբյուրը⁴: Արդյունքում ֆինանսական և բիզնես տեղեկատվությունն այսօր զբաղեցնում է համաշխարհային համախառն լրագրողական արտադրանքի մեկ երրորդը⁵: Մեդիաշուկայի այլ հատվածների հետ համեմատ ավելի սուր մրցակցության պայմաններում տնտեսական ՉԼՄ-ները հանդես են եկել, որպես մեդիաբիզնեսում նորարար մարքեթինգային քայլերի պիոներներ: Տնտեսական մեդիաները հեղափոխել են ոչ միայն ՉԼՄ-ների և մի շարք հարակից ոլորտների մարքեթինգը, այլ նաև առաջինն են դուրս եկել ՉԼՄ-ների ավանդական գործառույթների շրջանակներից: Բազմաթիվ հետազոտություններ ցույց են տվել, որ մեդիաներն ունակ են հասարակական կարծիք ձևավորել և ուղղել մարդկանց ուշադրությունը հանրության համար նոր թեմայի վրա: Զարգացած տնտեսական լրագրությունը, տեղեկացնելով և խթանելով առաջադեմ մտածելակերպ, ի գործ է արագացնել հայկական հասարակության անցումը դեպի ժողովրդավարություն և հանրապետության տնտեսական արդիականացում:

1.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԼՄ-ՆԵՐԸ: ԲԻԶՆԵՍ-ՄԵԴԻԱՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Երկրորդ ենթազվխում ներկայացվում է բիզնես-մեդիաների հայաստանյան շուկայի կառուցվածքը և գործունեության պայմանները: Տնտեսական լրագրությունը Հայաստանում սկսել է ձևավորվել երկրի՝ դեպի շուկայական հարաբերություններ անցում կատարելու հետ միասին: Անկախության առաջին տարիներին ինչպես տնտեսական, այնպես էլ այլ տեսակի լրագրության զարգացմանը խոչընդոտում էր ընթացող պատերազմը և էներգետիկ ձգնաժամը, սակայն նշված հանգամանքներն առավել բացասաբար էին ազդում տնտեսական լրագրության վրա, քանի որ դրանք խիստ դժվարացնում էին տնտեսական ակտիվությունը, որին էլ կոչված է սպասարկել տնտեսական լրագրությունը:

«Տնտեսական լրագրության պատմությունը կարելի է պայմանականորեն բաժանել երկու շրջափուլերի. կայացման, որն ընդգրկում է XX դարի վերջին տասնամյակը, և զարգացման, որը մեկնարկել է 1990-ականների վերջին – 2000-ականների սկզբին և շարունակվում է մինչ օրս: Առաջին շրջափուլը բնութագրվում է պարզագույն շուկայական ենթակառուցվածքների ձևավորմամբ և տնտեսության

³ Сергачев Владимир Яковлевич. Деловая пресса региона: состояние и перспективы развития : Дис. ... канд. филол. наук : 10.01.10 : Санкт-Петербург, 2000 148 с. РГБ ОД, 61:01-10/462-8, <http://www.lib.ua-ru.net/diss/cont/94220.html>, հասանելի է առ 23.06.2012

⁴ Մայն տեղում, էջ 303

⁵ Aeron Davis, The economic inefficiencies of market liberalization, The case of financial information in the London Stock Exchange, Goldsmiths College, University of London, Global Media and Communication, 2007 3: 157,pp 157-178, p.163

ազատականացման պայմաններում Հայաստանի առաջին քայլերով, որոնք, տնտեսությանը համընթաց, կատարում էր նաև տնտեսական լրագրությունը: Երկրորդ փուլի մեկնարկն ազդարարվում է պետական գույքի սեփականաշնորհման գործընթացի մեկնարկով, որի արդյունքում տնտեսության բազմաթիվ ոլորտներում ստեղծվեցին մենաշնորհներ, երկրում կապիտալի կենտրոնացվածությունը ձեռքբերեց մեծ մասշտաբներ, ինչը խիստ դանդաղեցրեց Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումը՝ խոչընդոտելով նաև տնտեսական լրագրության էվոլյուցիոն աճը:

1.3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՐԱՏՎԱԿԱՆՈՒԹՅՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԼՍԱՐՆԸ

Երրորդ ենթազխում ներկայացվում են Հայաստանի տնտեսական լրատվամիջոցների գործունեության պայմանները և նպատակային լսարանը: ՀՀ Տնտեսական ԶԼՄ-ները և, հատկապես, տնտեսական մամուլը բախվում են շահութաբերության հետ կապված լուրջ մարտահրավերների հետ: Շահութաբերության ապահովման հարցն արդիական է Հայաստանի ողջ մամուլի համար, բայց տնտեսական թերթերի համար այն առավել սուր է շուկայի փոքրության և կապիտալի շուկայի փաստացի բացակայության պատճառով:

Տպագիր մամուլի զարգացման համար անհրաժեշտ է ունենալ զարգացած տպագիր գովազդային շուկա, որի հիմնական գեներատորն ամբողջ աշխարհում փոքր ու միջին բիզնեսն է: Ինչ վերաբերում է հեռուստատեսությանը, այնտեղ հիմնական գովազդատուներն են խոշոր տնտեսվարողները, որոնք կարող են պատվիրել թանկ եթերային ժամանակ: Հայտնի է, մասնավորապես, որ ԱՄՆ-ում գովազդ փրայմ-թայմին կարող են պատվիրել ընդամենը 50 ընկերություններ⁶: Հայաստանում, սակայն, եթերաժամանակը համեմատաբար էժան է, ինչը թույլ է տալիս հեռուստագովազդ ունենալ ոչ միայն խոշոր, այլ նաև փոքր ու միջին ձեռնարկություններին, որոնց գովազդային պատվերներին են ապավինում թերթերը:

ՀՀ մասնավոր հեռուստաալիքներում մեկ գովազդային ռոպեի միջին արժեքը կազմում է 55-150 ԱՄՆ դոլար⁷, իսկ Հանրային հեռուստաընկերությունում 2012-ին մեկ գովազդային ռոպեի միջինացված արժեքը կազմել է 25 հազ. դրամ (60 ԱՄՆ դոլար)⁸: Համեմատության համար, ռուսաստանյան «РБК ТВ» հեռուստաալիքում բիզնես-թայմին (10:30-ից 19:00 և 24:00-ից 07:00) մեկ գովազդային ռոպեի արժեքը կազմում է 75 600 ՌԴ ռուբլի (\$2500)⁹: Հայաստանի հետ համադրելի վրացական հեռուստաշուկայում մեկ գովազդային ռոպեի միջին գինը 2003թ. կազմել է \$500-600¹⁰: Այս իրավիճակը լրջորեն խոչընդոտում է թերթերի զարգացմանը:

Հայաստանում թերթային գովազդի համար բարենպաստ տարի կարող է դառնալ 2015 թվականը, երբ Հայաստանը անցում կկատարի թվային հեռարձակմանը. հաշվի առնելով այն հանգամանքը, որ թվայնացումից հետո ՀՀ տարածքում անվճար

⁶ Вартанова Е. Л. Медиаэкономика зарубежных стран. М.: Аспект Пресс, 2003. - 336 с., стр. 133

⁷ Рипсима Джебебджян, «Телереклама - бесконтрольная зона», газета «Аравот», 20 мая 2006, http://www.aravot.am/2006/aravot_rus/May/20/st03.htm, հասանելի է առ 01.12.2010

⁸ Հայաստանի Հանրային «Հ1» հեռուստաընկերության հաղորդումներում գովազդային ժավալների և ստեղաբաշխման ՀՀ օրենսդրությանը համապատասխանության մոնիթորինգ. <http://www.asparez.am/wp-content/uploads/2012/10/1st-report-2011-total-2011-2012-may-june-comparative-monitoring-jca-9.10.2012.pdf>, հասանելի է առ 08.11.2012

⁹ <http://www.mintv.ru/smi.php?step=2&place=tv&channel=rbc>, հասանելի է առ 11.03.2012

¹⁰ Самвел Манасарян: Низкие цены на рекламу обусловлены большим количеством телеканалов 13 - 19 ноября 2003 47 (551) "Деловой Экспресс" http://www.express.am/47_03/business.html, հասանելի է առ 01.12.2010

հեռարձակվելու է ընդամենը 5-6 հեռուստաալիքից բաղկացած մուլտիպլեքս¹¹, տրանսբանական է, որ գովազդային սակագներն այնտեղ կաճեն և միջին ու փոքր բիզնեսը կսկսի փնտրել ավելի մատչելի գովազդային հարթակներ:

Տնտեսական տպագիր լրատվամիջոցները ծաղկում են բազմաթիվ երկրներում, որտեղ չկա ընդարձակ ներքին շուկա, բայց ձևավորված է միջին խավ: Վառ օրինակ է Ֆիլիպինյան: Այսպիսով՝ Հայաստանում տնտեսական լրագրության զարգացման լուրջ խոչընդոտներից է երկրում միջին խավի բացակայությունը:

Ելնելով վերը շարադրվածից, ակնհայտ է դառնում, որ մամուլի և, մասնավորապես, տնտեսական մամուլի հայկական շուկան գրավիչ չէ արտասահմանյան ներդրողների համար:

Համեմատելով հայկական և վրացական մեդիաշուկաները և, մասնավորապես, տնտեսական լրատվամիջոցների դաշտերը, հեշտ է նկատել է, որ Վրաստանն ունի այստեղ առավելություն՝ ի հաշիվ իր տարածքում գործող մեծաքանակ միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների, Հայաստանի համեմատ ավելի շատ արտասահմանյան ներդրողների առկայության և բարենպաստ գործարար միջավայրի: Վրացական շուկան, չնայած շատ չի տարբերվում հայկականից, ավելի բարենպաստ է մեդիաբիզնեսի և, մասնավորապես, տնտեսական լրատվամիջոցների համար: Վրաստանում արդեն գործում են մի շարք անգլիալեզու լրատվամիջոցներ, այդ թվում՝ գունավոր բիզնես-շաբաթաթերթ Commercial-ը, իսկ 2011թ. դեկտեմբերից լույս է տեսնում Forbes ամսագրի վրացական տարբերակը¹²:

«Հ կապիտալի շուկայի թերզարգացվածության պատճառով երկրում չկան խոշոր ներդրումային ընկերություններ, որոնց մասնագետները մրցակցային շուկաներում տնտեսությունը լուսաբանող լրագրողների համար տեղեկատվության, թերևս, կարևորագույն աղբյուրներից են:

Այսպիսով՝ Հայաստանում մանր բաժնետերերի շերտի բացակայության և տնտեսական զարգացումներում հասարակության սովոր գանգվածի հետաքրքրված չլինելու պայմաններում տնտեսական լրատվամիջոցների փաստացի լսարանն է Հայաստանի փոքրաթիվ գործարար հանրությունը, որը չի գոյացնում այնպիսի պահանջարկ, որպեսզի ի պատասխան ստանա պատշաճ առաջարկ: Արդյունքում Հայաստանի բիզնես մեդիաների փաստացի միակ նպատակային լսարանը՝ գործարարների և պետական գործիչների որոշակի հատվածը, մնում է չբավարարված տնտեսական լրագրության մակարդակից, քանի որ նրանք չեն բավարարվում զուտ տեղեկատվությամբ և զգում են որակյալ վերլուծությունների կարիք¹³:

1.4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՆՅՈՒՆԿՏՈՒՄՅՈՒՄՆԻ ԱՐՏԱՅՈՒՈՒՄԸ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵԴԻԱՆԵՐԻ ՎՐԱ

Չորրորդ ենթազվխում ներկայացվում է տնտեսական կոնյունկտուրայի արտացոլումը ՀՀ տնտեսական մեդիաների վրա: Անհավասար մրցակցության պայմաններում Հայաստանի մի շարք ապրանքային շուկաներում ձևավորվել է ստվերային տնտեսության բավականին բարձր մակարդակ: Ամբողջությամբ կան

¹¹ ՀՀ կառավարության որոշում ՀՀ-ում վերգետնյա թվային հեռուստա-ռադիոհեռարձակման համակարգի ներդրման ծառայությունների մատուցման բնութագրին ներկայացվող պահանջները հաստատելու մասին, 23 օգոստոսի 2012թ., <https://www.e-gov.am/gov-decrees/item/21866/>, հասանելի է առ 08.11.2012

¹² Վաղվանից Forbes ամսագիրը կտպագրվի նաև վրացերեն, Մեդիամաքս, 7.12.2011, <http://www.mediamax.am/am/news/society/3335/>, հասանելի է առ 04.04.2012

¹³ Հատված հարցազրույցից, 2010թ. օգոստոս

մասնակի ստվերում գործող բազմաթիվ ընկերություններ խուսափում են գովազդից և իրենց գործունեության հանդեպ ավելորդ ուշադրություն գրավելուց: Որպես հետևանք, Հայաստանի տնտեսության առանձնահատկությունները բացասաբար են անդրադառնում ոչ միայն ՋԼՄ-ների գովազդային եկամուտների, այլ նաև բուն լրագրողական գործունեության վրա: Ստվերային տնտեսության մեծ ծավալները խիստ բարդացնում են տեղեկատվության թափանցիկությունը և գործարարների պատրաստակամությունը կիսվել սեփական բիզնեսի մասին տեղեկություններով:

Հայկական ՋԼՄ-ների համար դրական գործոն է հայկական շուկա այնպիսի արտասահմանյան ներդրողների մուտքը, որոնք չունեն քաղաքական մոտիվացում և աշխատում են Հայաստանում բացառապես շահույթ ստանալու նպատակով: Լրատվամիջոցների համար գովազդային եկամուտ ապահովելուց բացի, խոշոր արտասահմանյան ներդրողներն իրենց հետ բերում են արևմտյան մենեջմենթի և ՋԼՄ-ների հետ համագործակցության մշակույթ: Նրանք կարևոր դեր են խաղում գործարար տեղեկատվության դաշտի կայացման գործում:

Բիզնես-լրագրության որակի բարձրացման հիմնախնդրի լուծման հեռանկարները դեռևս մշուշոտ են, քանի որ տնտեսության լավ իմացությամբ մարդիկ գերադասում են աշխատել ոչ թե լրատվամիջոցներում, այլ շատ ավելի լավ վարձատրվող և ավելի բարձր սոցիալական պաշտպանություն ապահովող տեղերում:

1.5. «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՎՈՒՄԲ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՍՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱԾԻ ԳՈՐԾՈՆ

Հինգերորդ ենթագլխում ներկայացվում է «Տնտեսական լրագրողների ակումբ» հասարակական կազմակերպությունը, որպես տնտեսական լրագրողների մասնագիտական աճի գործոն: Հայկական տնտեսական լրագրողների մասնագիտական մակարդակի բարձրացման նպատակով մի շարք տնտեսական թեմաներով գրող լրագրողներ 2003թ. հիմնադրել են «Տնտեսական լրագրողների ակումբ» հասարակական կազմակերպությունը, որի հիմնական առաքելությունն է բիզնեսը լուսաբանող լրագրողների համար թրենինգների կազմակերպումը¹⁴:

Ակումբը մեծ աշխատանք է կատարել Հայաստանի տնտեսական լրագրողների առաջին սերնդի ձևավորման գործում: Սակայն, ինչպես փաստում է ակումբի կոորդինատոր Ա. Բաղդասարյանը, լրագրողների այդ սերունդն արդեն «սպառել է իրեն» ու, ավելի բարձր վարձատրվող աշխատանք փնտրելով, «ցրվել է» տարբեր ընկերությունների փիրմ-բաժիններով¹⁵: Իսկ ահա տնտեսական լրագրության դաշտն ամբողջովին հանձնվել է երիտասարդ սերնդին, ու, քանի որ կրթության որակը վերջին տարիներին չի փոխվել, տնտեսական լրագրողների մասնագիտական որակի խնդիրը շարունակում է մնալ արդիական:

1.6. ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՐՑԵՐ

Վեցերորդ ենթագլխում ներկայացվում են լրագրողների սոցիալական պաշտպանվածության հիմնահարցերը: Չնայած այն դիտարկումներին, որ Հայաստանում որակյալ տնտեսական լրագրության պակասի պատճառը ոչ թե լրագրողների եկամուտների, այլ ինքնագաղթնության և ցածր պրոֆեսիոնալիզմի մեջ է, այնուամենայնիվ, թույլ սոցիալական պաշտպանվածությունը անհրապուրիչ է դարձրել լրագրողի և, մասնավորապես, տնտեսական լրագրողի մասնագիտությունը:

¹⁴ Տնտեսական լրագրողների ակումբ, <http://armeconomedia.com/ru/about-us/5/> հասանելի է առ 25.08.2010

¹⁵ Հատված հարցազրույցից, 2010թ. օգոստոս

ՂՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինը ենթազխից բաղկացած երկրորդ գլխում ներկայացվում են Հայաստանի տնտեսական լրատվամիջոցների գործունեության առանձնահատկությունները, վեր են լուծվում լրագրողների մասնագիտական պատրաստվածության մակարդակը, նրանց գործունեության ժանրային նկարագիրը, նյութերում կարծիքների և փաստերի տարանջատումը, տեղեկատվության աղբյուրների հետ աշխատանքը, ստեղծագործական ազատության և ինքնագրաքննության հիմնախնդիրները, հայկական ՋԼՄ-ների և տնտեսական սուբյեկտների միջև դատական վեճերը, տնտեսական լրագրության ազդեցությունը կառավարության և բիզնեսի վրա և տնտեսական լրագրության մասսայականացման և անձնավորման միտումները:

2.1. ԺԱՆՐԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Առաջին ենթազխում ներկայացվում է տնտեսական ՋԼՄ-ների ժանրային նկարագիրը: Հետազոտությունը ցույց է տվել, որ Հայաստանում տնտեսական լրագրողների մեծամասնությունն աշխատում է հարցազրույցի և լուրերի ժանրերում, իսկ տեսություններով և վերլուծություններով զբաղվում է նրանց միայն կեսը: ՀՀ հեռուստաալիքներում վերլուծական տնտեսական լրագրության գրեթե իսպառ բացակայում է, իսկ տպագիր լրատվամիջոցների տնտեսական լրագրողները չափազանց շատ են հենվում հարցազրույցի ժանրի վրա, որը գնալով թուլանում է արևմտյան մեդիաշուկաներում:

Հարցված լրագրողների մեծամասնությունը կրթությամբ տնտեսագետներ են, իսկ լրագրողական կրթություն ունեն հարցվածների փոքրամասնությունը:

2.2. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Երկրորդ ենթազխում ներկայացվում է հարցված տնտեսական լրագրողների մասնագիտական պատրաստվածությունը: Հարցված լրագրողների կեսը չի մասնակցել տնտեսական քաղաքականության և բիզնեսի լուսաբանմանը վերաբերող դասընթացների կամ սեմինարների: Մնացածը մասնակցել են միջազգային կազմակերպությունների, Տնտեսական լրագրողների ակումբի, ՀՀ Կենտրոնական բանկի, ՀՀ մասնավոր և պետական հատվածների կողմից կազմակերպված մասնագիտական դասընթացներին: Արտերկրում մասնագիտական վերապատրաստում են անցել հարցվածներից ընդամենը երեքը (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Թուրքիա), ինչը վկայում է Հայաստանում տնտեսական լրագրողների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը հատկացվող անբավարար ուշադրության մասին:

2.3. ՓԱՍՏԵՐ և ԿԱՐԾԻՔՆԵՐ

Երրորդ ենթազխում ներկայացվում է ՀՀ տնտեսական լրագրությունում փաստերի և կարծիքների տարանջատվածության մակարդակը: Բիզնես-լրագրության կարևոր և վիճահարույց կետերից է այսօր նյութերում հեղինակային կարծիքի առկայությունը: Արևմտյան մեդիաները, կարծիքի և փաստի հստակ տարանջատումից բացի, ձգտում են նաև բացառել նյութերում հեղինակների մեկնաբանությունները, թողնելով որևիցե երևույթի փորձագիտական մեկնաբանությունը փորձագետներին: Չնայած հարցված հայաստանյան լրագրողների մեծամասնությունը համակրանքով է վերաբերվում արևմտյան բիզնես-մեդիաներին, այնուամենայնիվ, նրանցից ոչ ոք չի հրաժարվում նյութում սեփական (կամ խմբագրության) կարծիքը հայտնելուց: Տվյալ երևույթը բացատրվում է երկու հիմնական պատճառով. Հայաստանում տնտեսագիտության ոլորտում կոմպետենտ և կարծիքը հրապարակավ հայտնելուն

պատրաստ փորձագետների պակասով և ընդդիմության գնահատականների բարձր քաղաքականացվածությամբ, ինչպես նաև հայկական լրագրողների կողմից լրագրության ռուսական ավանդույթներին հավատարմությամբ, որտեղ նյութերում լրագրողի կարծիքը կարևոր տեղ է զբաղեցնում¹⁶:

Արդյունքում հայաստանյան ՋԼՄ-ներում պակասում են որակյալ լրագրողական նյութերը՝ իրականության առավել ընդգրկում և օբյեկտիվ արտացոլմամբ: Փոխարենը, մեդիաները ողողված են լրագրողների կարծիքներով, որոնք, մասնագիտության կանոններով, պետք է բարձրացնեն հիմնահարցերը, այլ ոչ թե բացատրեն դրանց պատճառները և, առավել ևս, լուծման ուղիներ առաջարկեն:

2.4. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ

Չորրորդ ենթազխում ներկայացվում է աղբյուրների հետ ՀՀ տնտեսական լրագրողների աշխատանքի առանձնահատկությունները:

Հայկական տնտեսական լրատվամիջոցներում աղբյուրների հետ աշխատանքը մոտ է ռուսաստանյան պրակտիկային. ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում առաջնահերթությունը տրվում է տեղեկատվության առաջնային աղբյուրներին՝ կոնկրետ ընկերության, նախարարության կամ այլ հաստատության այն ներկայացուցչին, որը կարող է տեղեկատվություն տալ լրագրողին «առաջին ձեռքից»: Լրագրողները հաճախ փորձում են շրջանցել մամուլ ծառայությունները և մեկնաբանություն ստանալ անմիջապես կազմակերպության ղեկավարությունից:

Հատկանշական է նաև, որ հայաստանյան և ռուսաստանյան տնտեսական թեմաներով գրողները, ի տարբերություն իրենց եվրոպական և ամերիկյան գործընկերների, մեծ նշանակություն չեն տալիս, որպես աղբյուրների, քաղաքական գործիչներին՝ ձգտելով խուսափել դատողությունների քաղաքականացմանը: Այնուամենայնիվ, այլընտրանքի բացակայության պայմաններում, քաղաքական գործիչները Հայաստանում հաճախ են դառնում աղբյուր տնտեսական թեմաներով մեկնաբանությունների համար:

Ռուսաստանյան և հայաստանյան տնտեսական լրագրողների՝ աղբյուրների հետ աշխատանքի սկզբունքային տարբերությունն է տնտեսական վերլուծաբանների հանդեպ հայկական լրագրողների անվերապահ դրական վերաբերմունքը, մինչդեռ Ռուսաստանում և Արևմուտքում վերջիններս չեն օգտվում բացարձակ հեղինակությամբ¹⁷: Տնտեսական վերլուծաբանների հանդեպ դրական վերաբերմունքը Հայաստանում, առաջին հերթին, պայմանավորված է նրանց՝ բացառիկ աղբյուր լինելով և իրենց դատողություններում քաղաքականացման բացակայությամբ՝ համեմատած այլ աղբյուրների մեծամասնության հետ:

Վերջին տարիներին Հայաստանի տնտեսական լրագրությունում նկատվում է հետազոտական կենտրոնների և համալսարանների՝ որպես տեղեկատվության աղբյուրների դերի աճ, ինչը դրական շարժ է:

2.5. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՏԵՂՑԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Հինգերորդ ենթազխում ներկայացվում է տնտեսական լրագրողների ստեղծագործական գործունեության ազատության աստիճանի գնահատականը: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ չնայած փոքրաթիվ խմբագրական «վետոների», լրագրողներն, ընդհանուր առմամբ, ազատ են լուսաբանման թեմաների ընտրության հարցում:

¹⁶ Koikkalainen, Katja (2007) 'The local and the International in Russian business journalism: Structures and practices', *Europe-Asia Studies*, 59:8, 1315 — 1329, p. 1324

¹⁷ Նույն տեղում, էջ 1325

2.6. ԻՆՔՆԱԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ ԳՐՈՂ ՁԱՆԵՐՈՒՄ

Վեցերորդ ենթագլխում ներկայացվում է տնտեսական թեմաներով գրող ՁԱՆ-ներում առկա ինքնագրաքննությունը: Հայաստանում ձևավորված տնտեսական կոնյունկտուրան և չլուծված արտաքին քաղաքական հարցերը, ռուսաստանյան ներդրումների բարձր քաղաքական մոտիվացումը ազդում են տնտեսական լրագրության բովանդակության վրա՝ ստիպելով լրագրողներին հաճախակի ինքնագրաքննության դիմել:

2.7. ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱՆ-ՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՃԵՐԸ

